ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1(59)
2013 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -
ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ
Դավիթ Մելքոնյան -
ի.գ.թ., պատասխանատու քարտուղար
Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.
Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.
Արմեն Հայկյանց - ի.գ.դ.
Գագիկ Համբարձումյան
Արթուր Վաղարշյան - ի.գ.թ.
Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.
Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 55-77-92

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով հեղինակների տեսակետներին:
10 համակարգչային էջից ավելի չպատվիրված նյութերը չեն ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 7 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
18.01.2013
Հանձնված է տպագրության
23.04.2013

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (59)
2013 г.

Главный редактор:
к.ю.н., проф.Левон Оганян

Редакционный совет

Самвел Дилбандян -
д.ю.н., зам. главного редактора
Давид Мелконян -
к.ю.н., ответственный секретарь
Геворг Даниелян - д.ю.н.
Арутюн Хачикян - д.ю.н.
Армен Айкянц - д.ю.н.
Гагик Амбарцумян
Артур Вагаршян - к.ю.н.
Сергей Аракелян - к.ю.н.
Виген Кочарян - к.ю.н.

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92
e-mail: a_petrosyan@ysu.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.01.2013
Подписано к печати 23.04.2013

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Արման ԹԱԹՈՅԱՆ
ՀՀ քր. դատ. նոր օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խմբի անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Դևիդ ՌՈՒԴՈՎՍԿԻ[1]
ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի իրավունքի դպրոցի պրոֆեսոր, Ֆիլադելֆիայի պաշտպանների միության տնօրենների խորհրդի նախագահ

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի զարգացման համար հիմնարար նշանակություն ունեցան 2005 թվականին կատարված սահմանադրական փոփոխությունները, որոնցով ՀՀ իրավական համակարգի և մասնավորապես քրեական արդարադատության հետագա զարգացումը կանխորոշող հիմնական ուղենիշ դարձավ միջազգային իրավական քաղաքակիրթ արժեհամակարգը: Ըստ այդմ, տարիների ընթացքում ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը ենթարկվեց այնպիսի փոփոխությունների, որոնք կոչված էին ապահովելու լիարժեք համապատասխանություն այդ արժեհամակարգին:

Այդուհանդերձ, նշված բարեփոխումների իրականացման ընթացքում անհրաժեշտ խորությամբ չուսումնասիրվեցին քրեական արդարադատության տեսական հարցերը և այդ ոլորտում այլ երկրների դրական փորձը: Պարզ դարձավ, որ կատարված փոփոխությունները հիմնականում ունեն դրվագային բնույթ և զուրկ են քրեադատավարական այլ ինստիտուտների հետ տրամանաբանական կապից:

Ուստի անհրաժեշտ դարձավ քրեական վարույթի ընթացքում առաջ եկող հարաբերությունները ենթարկել որակապես նոր, համակարգային իրավական կանոնակարգման: Այս անգամ խնդիր դրվեց հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռության ապահովման պայմաններում ՀՀ քրեադատավարական օրենսդրություն ներմուծել այնպիսի ինստիտուտներ, որոնք, ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան, կապահովեն սահուն անցում քրեական արդարադատության նոր համակարգի:

Առաջնահերթ նշանակություն ստացան քրեական վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման արդյունավետ երաշխիքների սահմանումը, ինչպես նաև ազատությունից զրկման կառուցակարգերի նկատմամբ հայեցակարգային նոր մոտեցումների որդեգրումը: Խոսքը հատկապես վերաբերում է այդ անձանց իրավունքների ապահովմանը, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի կանխարգելմանը, քանի որ այս ոլորտն օբյեկտիվորեն ավելի զգայուն է, իսկ այդ անձինք՝ իրավունքների ապահովման տեսանկյունից առավել խոցելի: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի կիրառության փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ ա-

զատությունից զրկման հենց սկզբնական փուլերում են տեղի ունենում իրավունքների հիմնական խախտումներն ու չարաշահումները:

Նշված հարցերի նորովի իմաստավորման հրամայականը պայմանավորված է նաև ՀՀ միջազգային պարտավորություններով: Այս առումով միջազգային կազմակերպությունների կողմից բացասական է գնահատվել այն, որ մեր երկրում հիշյալ կատեգորիայի անձանց իրավունքների երաշխավորման ուղղությամբ բավարար միջոցներ (այդ թվում՝ իրավական) չեն ձեռնարկվել, անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել[2]:

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) արձանագրել է, որ ազատությունից զրկմանն անմիջապես հաջորդող ժամանակահատվածում վախեցնելու և ֆիզիկական բռնության ենթարկվելու ռիսկն ամենամեծն է: Հետևաբար, ոստիկանություն բերված՝ ձերբակալված անձանց անհրաժեշտ իրավունքներով օժտելն այդ ժամանակահատվածում նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք է: Նման հնարավորության առկայությունը զսպող նշանակություն ունի իրավապահ մարմինների այն աշխատակիցների համար, ովքեր առանձնանում են ազատությունից զրկված անձանց նկատմամբ բռնություն կիրառելու հակվածությամբ[3]:

Խոսքը, սակայն, իրավական միակողմանի այնպիսի լուծումների մասին չէ, որոնք ուղղված են քրեական վարույթի ընթացքում մասնավոր շահի պաշտպանությանը և անտեսում են հանրային շահի կարևորությունը: Այսինքն՝ իրավունքների ապահովման միջազգային հանրաճանաչ չափանիշների ներդրման հետ միասին անհրաժեշտ է նախատեսել իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք քրեական հետապնդում իրականացնող մարմինների համար չեն ստեղծի խոչընդոտներ իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու հարցում: Այս առնչությամբ ԽԿԿ-ն նշել է, որ ոստիկանական քննության իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով բացառիկ դեպքերում անհրաժեշտ է լինում, ասենք, որոշակի ժամանակով հետաձգել ձերբակալված (կալանավորված) անձի հանդիպումը իր կողմից ընտրված փաստաբանի հետ: Մյուս կողմից՝ դա չպետք է հանգեցնի այն բանին, որ փաստաբանի մատչելիության իրավունքը քննության ընթացքում ամբողջությամբ մերժվի[4]:

Ինչպես ԽԿԿ-ն, այնպես էլ Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն ազատությունից զրկելու սկզբնական փուլերում հնարավոր վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք են համարում այնպիսի իրավունքների ամրագրումը, ինչպիսք են ազատությունից զրկելու պատճառն իմանալու, իրավունքների հստակ պարզաբանում ստանալու, սեփական կարգավիճակի մասին իր ընտրությամբ երրորդ անձանց տեղեկացնելու, փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և այլն:

Այս առումով սկզբունքային նշանակություն ունեն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) տեղ գտած իրավակարգավորումները:

Կարևորելով քրեական վարույթի շրջանակներում անձի ազատության և անձնական անձեռնմխելիության պաշտպանությունը՝ Նախագծում ամրագրվել է հատուկ սկզբունք (18-րդ հոդված): Իբրև այդ սկզբունքի առանցքային տարր՝ սահմանվել է, որ յուրաքանչյուր անձի անհապաղ և պատշաճ ձևով հաղորդվում են նրան ազատությունից զրկելու հիմքերը, իսկ հանցագործության մեջ մեղադրվելու դեպքում՝ նաև դրա փաստական հանգամանքները և իրավական գնահատականը (18-րդ հոդվածի 5-րդ մաս): Դրանից բացի, նախատեսվել է, որ վարույթի ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ա-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ դեղամիջոցների օգտագործման, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու միջոցով, ինչպես նաև այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է անձից տեղեկություններ ստանալ բռնության, սպառնալիքի, խաբեության, նրա իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով (18-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ազատությունից զրկման կառուցակարգերի նորովի իմաստավորման շրջանակներում Նախագծում ներդրվել է ձերբակալման նոր հայեցակարգ, նոր հիմքեր, պայմաններ ու ընթացակարգ: Այդպիսի իրավական կարգավորման հիմքում դրվել են անձի ազատությունը և դրա փաստացի սահմանափակման չափանիշը. հենց սրա հետ է կապվում ազատությունից զրկված անձանց համար անհրաժեշտ երաշխիքների նախատեսումը: Ըստ այդմ, Նախագծում ձերբակալում է համարվում առանց դատարանի որոշման՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված անձի ազատության իրավունքի սահմանափակումը (6-րդ հոդվածի 41-րդ կետ):

Նախագծի 108-րդ հոդվածի 1-ին մասն իր հերթին սահմանել է.

«Ձերբակալումը կարող է կիրառվել՝

1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում[5].

2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար.

3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ.

4) վարույթի մասնավոր մասնակիցների (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև փորձագետի, թարգմանչի, վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումն ապահովելու համար (կարճաժամկետ ձերբակալում)»:

Համաձայն Նախագծի 108-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Անձը համարվում է ձերբակալված նրան ազատությունից փաստացի զրկելու պահից: Ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված ժամկետը հաշվարկվում է նույն պահից»:

Ձերբակալման էության վերաբերյալ այսպիսի մոտեցումը նախևառաջ պայմանավորված է միջազգային իրավաբանության պահանջներով: Դրանց համապատասխան, ազատությունից զրկելու սկզբնական պահ է համարվում այն, երբ անձի ինքնուրույնությունը սահմանափակվում է, և նա ստիպված է լինում ենթարկվել պետական մարմնի կամքին[6]: Այդ պահից են առաջ գալիս ձերբակալված անձի համար նախատեսված երաշխիքները: Մեկ այլ բնորոշմամբ, այդ երաշխիքներն առաջ են գալիս նաև այն պահից, երբ ոստիկանության աշխատակիցներն ածին առաջարկում են ուղեկցել ոստիկանության բաժին, և նույնիսկ եթե այդ անձը դեռ պաշտոնապես ձերբակալված չէ[7]: ԽԿԿ-ն ազատությունից փաստացի զրկելու և համապատասխան երաշխիքների (օրինակ՝ փաստաբանի կամ բժշկի մատչելիությունը) առաջ գալու սկզբնական պահ է համարում նաև այն, երբ նույնիսկ անձը պարտավորեցվել է մնալ ոստիկանության աշխատակիցների հետ[8]: Դեռ Միրանդայի իրավական հեղափոխության ժամանակաշրջանում նման դիրքորոշում է արտահայտել նաև ԱՄՆ Գերագույն դատարանը. մեղադրյալը համարվում է անազատության մեջ և իրավունքներ է ձեռք բերում այն պահից, երբ նա ողջամտորեն զգում է, որ սեփական կամքով չի կարող հեռանալ[9]:

Քննարկվող համատեքստում հիմնարար նշանակություն ունի Նախագծի՝ «Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի իրավունքները, պարտականությունները, դրանց իրականացման պայմաններն ու երաշխիքները» վերտառությամբ 110-րդ հոդվածի նա-

խատեսումը:

Այդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում Նախագծով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

1) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին.

2) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը.

3) պահպանել լռություն.

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

5) հրավիրել փաստաբան.

6) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման:

Դրանից բացի, Նախագիծը սահմանել է, որ հիշյալ մասի 4-6-րդ կետերով սահմանված իրավունքները ծագում են հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից:

Այս հոդվածում տեղ գտած իրավակարգավորումները նպատակ ունեն հնարավոր չարաշահումներից պաշտպանել քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված այն անձանց, ովքեր դեռ չունեն մեղադրյալի իրավական կարգավիճակ և, հետևաբար, իրավունքների ու պարտականությունների տեսանելի շրջանակ, սակայն նրանց նկատմամբ իրականացվում են քրեական հետապնդման տարրեր պարունակող գործողություններ: Այստեղ առավել քան կարևոր է անորոշությունը չեզոքացնող հստակ իրավակարգավորման առկայությունը, քանի որ չարաշահման վտանգն առավել մեծ է: Այդ կերպ փորձ է արվում վերացնելու այն խնդիրները, որոնք մշտապես համարվել են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի խոցելի կողմերը: Ընդ որում, Նախագիծն ամրագրում է իրավունքների նվազագույն ծավալ: Այդ կերպ սահմանվում է այդ անձանց իրավունքների երաշխավորման այն նվազագույն հիմնարար չափանիշը, որը պարտադիր ենթակա է ապահովման յուրաքանչյուր ձերբակալվածի համար:

Նախագծի 110-րդ հոդվածում տեղ գտած իրավունքների՝ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում ոչ պատշաճ ամրագրման վերաբերյալ մտահոգություններ է արտահայտել Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն: Այն, մասնավորապես, Հայաստանից պահանջել է ներկա օրենսդրական բարեփոխումների շրջանակներում, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով, ձեռնարկել անհապաղ ու արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար իրավական երաշխիքներ ձերբակալված կամ կալանավորված բոլոր անձանց համար ազատությունից զրկման ամենասկզբնական պահից՝ թե՛ օրենի մակարդակով, թե՛ գործնականում: Կոմիտեն առանձնացրել է այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են փաստաբանի մատչելիության, անկախ բժշկական փորձաքննության, ազգականին տեղեկացնելու, դատարանի առջև պատշաճ կերպով կանգնելու իրավունքները[10]:

ԽԿԿ-ն, խոսելով ձերբակալված անձանց իրավունքների ապահովման մասին, նշել է, որ ազատությունից զրկված անձի իրավունքները որևէ արժեք չեն ունենա, ե-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

թե այդ անձը տեղեկացված չլինի դրանց մասին: Հետևաբար պարտադիր է՝ ազատությունից զրկված անձինք անհապաղ հստակ տեղեկացվեն իրենց իրավունքների մասին իրենց հասկանալի լեզվով: Ազատությունից զրկված անձանց՝ ազատությունից զրկման առաջին իսկ պահից պետք է պարբերաբար տրամադրվեն հուշաթերթիկներ, որտեղ պարզ շարադրված են այդ իրավունքները: Բացի դրանից, այդ անձինք պետք է ստորագրությամբ հավաստեն, որ տեղեկացել են իրենց իրավունքների մասին[11]:

Եվրամիության «Քրեական դատավարությունում տեղեկատվության իրավունքի մասին» դիրեկտիվով հաստատվել են կասկածյալների կամ մեղադրյալների նվազագույն իրավունքները: Այդպիսիք են ճանաչվել փաստաբանի մատչելիության, լռություն պահպանելու, ձերբակալվելուց կամ կալանավորվելուց անմիջապես հետո իրավունքների մասին տեղեկացվելու, անհապաղ բժշկական զննման մատչելիության իրավունքները և այլն[12]:

Մեղադրյալի համար նույնպիսի իրավունքներ (լռություն պահպանելու, բժշկական զննման ենթարկվելու և այլն) է սահմանել Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածը[13]:

Նշված հարցերի առնչությամբ համանման իրավական կարգավորում են բովանդակում Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 42-րդ, 212-213-րդ հոդվածները:

Հետաքրքրական են ամերիկյան իրավունքում առկա մոտեցումները: Քննարկվող իրավունքների (փաստաբանի մատչելիության, ազատությունից զրկման պատճառներն իմանալու և այլ իրավունքներ) հետ միասին ամերիկյան իրավունքը *Միրանդան ընդդեմ Արիզոնայի* գործով որոշման մեջ հատուկ ուշադրության է արժանացրել անձի՝ լռություն պահպանելու իրավական հնարավորությունը: Սա չի սահմանափակվում անձին այդ իրավունքի մասին պարզապես տեղեկացնելով: Այստեղ ոչ պակաս կարևորվում է պարզաբանումը, որ այն, ինչ անձը կասի, կարող է և պետք է օգտագործվի նրա դեմ դատարանում: Այս պարզաբանումն անհրաժեշտ է համարվում ոչ միայն այդ իրավական հնարավորության մասին անձին պարզապես տեղեկացնելու համար, այլ նաև զգուշացնելու, որ լռություն չպահպանելու դեպքում իր համար առաջ են գալու որոշակի հետևանքներ: Սա նաև արվում է այն նկատառումով, որպեսզի անձին հստակ ցույց տրվի, որ նա այլևս գտնվում է մրցակցային համակարգում, այսինքն՝ շրջապատված է այնպիսի մարդկանցով, ովքեր իր օգտին չեն գործում[14]: Այս իրավունքներն ունեն անգնահատելի կարևորություն, քանի որ նպատակ ունեն բացառելու ազատությունից զրկված անձանց վրա ճնշումները կամ պարտադրանքը խոսելու կամ անելու այն, ինչ նա չէր անի կամովին[15]:

Նախագծում 110-րդ հոդվածի սահմանումը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավաբանությունից: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է *Գ. Միքայելյանի* վերաբերյալ գործով որոշման[16] մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Այդ որոշմամբ Վճռաբեկ դատարանը մարդու իրավունքների եվրոպական (ստրասբուրգյան) չափանիշների և ՀՀ Սահմանադրության իրավական պահանջների հիման վրա սահմանել է ազատությունից զրկված անձանց՝ պարտադիր ապահովման ենթակա իրավունքների որոշակի ծավալ: Ընդ որում, խոսքը վերաբերում է ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքներին:

Հիշյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանը մասնավորապես արձանագրել է.

«Բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

(բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

(գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

(դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

(...)

Այնքանով, որքանով վերաբերելի են (mutatis mutandis), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է, կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ»:

Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումից հետևում է, որ նշված իրավունքները և երաշխիքները կիրառելի են նաև բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանության իրավունք ենթադրող կարգավիճակ չունեցող անձը փաստացի ազատությունից զրկված է, կասկածվում է հանցագործության մեջ և գտնվում է քրեական հետապնդման մարմնում: Ընդ որում, ազատությունից զրկված լինելու և հանցագործության մեջ կասկածվելու տարրերը սահմանված են տվյալ անձի դիտանկյունից՝ հիմք ընդունելով ողջամիտ ենթադրության չափորոշիչը: Այլ կերպ՝ բերվածի իրավունքների և երաշխիքների գոյության համար անհրաժեշտ չէ, որ անձին անմիջականորեն հայտարարեն, որ ինքը չի կարող լքել տվյալ շենքը, կամ որ ինքը կասկածվում է հանցագործության մեջ: Բավարար է, որ համապատասխան պաշտոնատար անձանց (օրինակ՝ ոստիկանների) գործողություններն այնպիսին լինեն, որ անկողմնակալ դիտորդին հնարավորություն տան հետևություն անելու (1) տվյալ անձի նկատմամբ կասկածի առկայության մասին և (2) տվյալ շինությունից տվյալ անձի ելքի անհնարինության մասին[17]:

Հարկ է նշել, որ Նախագծի 110-րդ հոդվածով սահմանված իրավունքները, ըստ ծագման ժամանակային չափանիշի, տարանջատվում են երկու մասի՝ ա) ազատությունից փաստացի զրկելու պահից ծագող իրավունքներ, բ) հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի՝ վարչական շենք մուտք գործելու պահից ծագող իրավունքներ: Նման տարանջատումն ինքնանպատակ չէ և կոչված է ապահովելու քրեական դատավարության զարգացման ներկա փուլում այդ իրավունքների արդյունավետ գործադրելիությունը:

Որպես երաշխիք՝ Նախագիծը սահմանել է քրեական հետապնդման մարմինների՝ ազատությունից զրկված անձի նվազագույն իրավունքների ապահովման ուղղված պարտականություններ: Մասնավորապես, ըստ Նախագծի 110-րդ հոդվածի 5-րդ մասի՝ այդ իրավունքների իրականացումն ապահովելու նպատակով՝

1) ձերբակալումն իրականացնող անձը պարտավոր է ձերբակալելուց անմիջապես հետո ձերբակալվածին բանավոր պարզաբանել նրա նվազագույն իրավունքները, պարտականությունները և նրան ազատությունից զրկելու պատճառը.

2) հետաքննության մարմինը կամ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձերբակալվածին հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք բերելուց հետո նրան տրամադրել իր նվազագույն իրավունքների և պարտականությունների ցանկը, ձերբակալվածի համար ապահովել իր գտնվելու վայրի

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

մասին տեղեկացնելու և փաստաբան հրավիրելու համար հեռախոսազանգեր կատարելու հնարավորություն, ձերբակալվածի պահանջի դեպքում ապահովել նրա բժշկական զննումը, չխոչընդոտել փաստաբանի տեսակցությունը ձերբակալվածի հետ:

Այս դրույթը կոչված է ապահովելու Նախագծի 110-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավունքների լիարժեք իրացումը գործնականում: Այն նախևառաջ պայմանավորված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն հիմնարար պահանջով, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի այնպիսի իրավունքներ, որոնք իրական են, այլ ոչ թե պատրանքային ու վերացական[18]: Բացի այդ, նման բովանդակությամբ իրավանորմի նախատեսումը բխում է Եվրոպական դատարանի՝ պետությունների պոզիտիվ պարտականությունների[19] վերաբերյալ իրավաբանությունից: Մասնավորապես, քննարկելով պետության պոզիտիվ պարտականությունների հարցը՝ Եվրոպական դատարանը նշել է. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի հիման վրա Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած՝ իրենց իրավազորության սահմաններում յուրաքանչյուրի իրավունքներն ու ազատություններն ապահովելու պարտավորությունը 3-րդ հոդվածի հետ միասին պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար, որ նա չենթարկվի խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի (...)»[20]: Այս դիրքորոշման հիման վրա ԽԿԿ-ն այդպիսի վերաբերմունքի դեմ երաշխիքներ է համարում ազատությունից զրկման պատճառն իմանալու, փաստաբանի և բժշկի մատչելիության, մի շարք այլ իրավունքների սահմանումն ու դրանց իրացման ապահովումը:

Ազատությունից զրկելու կառուցակարգերի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն արտահայտելիս ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես առաջնորդվել է նշված տրամաբանությամբ (տես, օրինակ, *Գ.Միքայելյանի* վերաբերյալ որոշումը):

Նույն սկզբունքով մինչդատական վարույթն իրականացնող մարմնի համար ձերբակալված անձի իրավունքների ապահովմանն ուղղված պոզիտիվ պարտականություններ է սահմանել, օրինակ, Ուկրաինայի քրեական դատավարության նոր օրենսգրքի 212-րդ հոդվածը:

Սույն վերլուծության շրջանակներում առավել մանրամասն կանդրադառնանք ձերբակալվածի՝ իր ընտրած անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու, փաստաբան հրավիրելու և իր պահանջով բժշկական զննման ենթարկվելու իրավունքներին: Դրանք տեղ են գտել Նախագծի 110-րդ հոդվածի 4-6-րդ կետերում և ծագում են հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահից:

ԽԿԿ-ի իրավական չափանիշների համաձայն՝ *առավելապես հենց այս երեք իրավունքներն են, որ համարվում են ձերբակալված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիքներ:* Դրանք բոլորն էլ պետք է իրացվեն ազատությունից զրկման սկզբնական պահից՝ անկախ այն բանից, թե իրավական կոնկրետ համակարգում ազատությունից զրկելն ինչպես է բնութագրվում (բերման ենթարկել, ձերբակալել և այլն)[21]: Այս իրավունքների օրենսդրական ամրագրման անհրաժեշտության մասին քանիցս նշել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն[22]:

Փաստաբան հրավիրելու կամ փաստաբանի մատչելիության իրավունքը:

Ժամանակակից միջազգային իրավաբանությունը ձերբակալված կամ որևէ այլ կերպ ազատությունից զրկված անձի իրավունքների արդյունավետ երաշխավոր-

ման հիմնարար չափանիշներից է համարում փաստաբան հրավիրելու իրավունքի առկայությունը: Միջազգային չափանիշներն այս իրավունքի ապահովման հարցում որպես կանոն խիստ են: Այդ իրավունքի առաջ գալու սկզբնական պահ է համարվում այն, երբ անձի ինքնուրույնությունը սահմանափակված է, և նա ստիպված է ենթարկվել քրեական հետապնդման մարմնի՝ չհեռանալու կարգադրությանը: Ընդ որում, քննարկվող իրավունքի ապահովման տեսանկյունից նշանակություն չունի՝ արդյոք անձը պաշտոնապես համարվում է ձերբակալված:

Այս առնչությամբ, Հայաստանի վերաբերյալ 2010 թվականի հաշվետվությունում ԽԿԿ-ն պահանջել է ապահովել, որ փաստաբանի մատչելիության իրավունքը ազատությունից զրկված անձանց արդյունավետ կերպով երաշխավորվի ազատությունից փաստացի զրկելու առաջին իսկ պահից: Ընդ որում, նշված հաշվետվության մեջ մեր երկրին ներկայացվել է համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու պահանջ (30-րդ կետ)[23]:

ԽԿԿ-ն նաև սահմանել է, որ փաստաբանի մատչելիության իրավունք պետք է ունենան ոչ միայն հանցագործություն կատարելու մեջ կասկածվողները, այլև ցանկացած անձ, ում վրա օրենքի ուժով դրված է ոստիկանություն կամ քննություն իրականացնող մարմնին ներկայանալու և որոշակի ժամանակով այնտեղ գտնվելու պարտականություն (օրինակ՝ վկաները):

Նախագծի 110-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ այս դեպքում խոսքը անձի կողմից սեփական նախաձեռնությամբ փաստաբան հրավիրելու հնարավորության մասին է: Այսինքն՝ այդ նորմը պետության վրա չի դնում նախանշված ժամանակահատվածում սեփական նախաձեռնությամբ ձերբակալվածին փաստաբանով ապահովելու պարտականություն: Ինչպես արդարացիորեն նշել է Վճռաբեկ դատարանը *Գ.Միքայելյանի* գործով որոշման մեջ, ձերբակալման սկզբնական ընթացաշրջանում ազատությունից զրկված անձին տրված փաստաբանի իրավունքին թղթակցում է պետության ոչ թե պոզիտիվ, այլ նեգատիվ պարտականությունը (չխոչընդոտելու հրավիրված փաստաբանի մուտքը): Նկատի ունենալով բերվածի կարգավիճակի կարճատևությունը՝ փաստաբանի անորոշ պահանջի իրավունք ամրագրելու դեպքում քրեական հետապնդման մարմինների վրա կդրվեր անհամաչափ և ոչ ողջամիտ պարտականություն՝ ազատությունից զրկված անձի համար ակտիվորեն ապահովելու փաստաբան[24]: Ամեն դեպքում այս իրավունքի իրացման համար կարևոր երաշխիք է անձին այդ մասին անահապաղ տեղեկացնելը:

Ըստ ԽԿԿ-ի՝ քննարկվող իրավունքը ենթադրում է փաստաբանին կապվելու, ինչպես նաև փաստաբանի կողմից անհապաղ այցելության իրավունք: Այն նախևառաջ պետք է ներառի նրա հետ առանձին խոսելը և փաստաբանի ներկայությամբ ցուցմունքներ տալը: Բնականաբար դա չի կարող քննություն իրականացնող մարմնին խոչընդոտել հարցաքննելու ձերբակալվածին հետաձգում չհանդուրժող հարցերի վերաբերյալ անգամ փաստաբանի բացակայության դեպքում (ով, հնարավոր է և, անմիջապես ներկայանալու հնարավորություն չունենա), ինչպես նաև բացառել այն փաստաբանի փոխարինումը, ով խոչընդոտում է հարցաքննության պատշաճ անցկացումը[25]:

Նախագծին համանման իրավական լուծումներ են որդեգրել արտասահմանյան որոշ երկրներ: Օրինակ՝ Լեհաստանի քրեական դատավարության օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի համաձայն՝ ձերբակալվածին իր պահանջով պետք է տրվի բոլոր հնարավոր միջոցներով փաստաբանի հետ կապվելու և նրա հետ առանձին զրուցելու հնարավորություն:

Ամերիկյան իրավական չափանիշներն

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

այս իրավունքի ապահովման հետ կապված սահմանում են, որ ազատազրկված անձի փաստաբանի իրավունքը չի նշանակում, թե ոստիկանության յուրաքանչյուր բաժնում պետք լինեն «ոստիկանությունում մշտապես հերթապահող փաստաբաններ»: Այդուհանդերձ, այդ իրավունքը ենթադրում է, որ երբ ոստիկանության աշխատակիցն առաջարկում է հարցաքննություն իրականացնել, ապա վերջինս պարտավոր է հարցաքննվողին տեղեկացնել, որ նա ունի փաստաբանի իրավունք, և եթե ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չկարողանա թույլ տալ ունենալու փաստաբան, ապա այդպիսին կտրամադրվի նրան: Մինչև փաստաբանի ժամանումը այդ անձին չեն կարող հարցաքննել:

Այդուամենայնիվ, եթե հարցաքննությունն իրականացվի, և գրավոր ցուցմունքներ ստացվեն առանց փաստաբանի մասնակցության, ապա կառավարությունը ծանր պարտականություն ունի ապացուցելու, որ հարցաքննված անձն իրազեկված և կամավոր հրաժարվել է իր դեմ չվկայելու և փաստաբան ունենալու իրավունքից: Մասնավորապես, Քարնլին ընդդեմ Քոքրանի վերաբերյալ գործով որոշման մեջ ԱՄՆ Գերագույն դատարանը սահմանել է ապացուցման չափազանց բարձր չափանիշ՝ արձանագրելով, որ ինքնին լռություն պահպանելուց և փաստաբան ունենալու իրավունքից անձանց գրավոր հրաժարումներն անթույլատրելի են: Անհրաժեշտ է, որ առկա լինեն հայտարարություն և ապացույցներ, որոնք ցույց կտան, որ մեղադրյալին արվել է փաստաբան ունենալու առաջարկ, սակայն նա իրազեկված և կամավոր մերժել է առաջարկը: Այս պահանջից ցածր որևէ այլ հրաժարում ընդունելի չէ: Այս պարտականությունը դրված է նահանգի ուսերին[26]:

Բժշկական զննման ենթարկվելու կամ բժշկի մատչելիության իրավունքը:

Այս իրավունքը ենթադրում է, որ բժշկական զննման ենթարկվելու ձերբակալված անձի յուրաքանչյուր պահանջի դեպքում անհրաժեշտ է առանց ձգձգումների ապահովել նրա բժշկական զննումը: Ընդ որում, անձը կարող է պահանջել հրավիրել իր նախընտրած բժշկին (նույնիսկ այն դեպքում, երբ ոստիկանության հրավիրած բժշկի կողմից արդեն ենթարկվել է զննման):

Քննարկվող իրավունքի հետ կապված՝ Հայաստանի վերաբերյալ 2010 թվականի հաշվետվության մեջ ԽԿԿ-ն քննադատել է այն, որ ՀՀ օրենսդրության մեջ այդ իրավունքի օրենսդրական ամրագրման, ինչպես նաև գործնականում լիարժեք իրացումն ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկվել: Նշված հաշվետվության 34-րդ կետում ԽԿԿ-ն մասնավորապես կոչ է արել ապահովել, որ՝

- բժշկի մատչելիության իրավունքն իրացվի ազատությունից փաստացի զրկելու պահից.
- ձերբակալված անձանց բժշակական զննումն իրականացվի ոստիկանության լսողական կամ տեսողական դիտարկումից դուրս, եթե հակառակն ակնհայտորեն չի պնդել բժիշկը[27].
- բժշկական զննման յուրաքանչյուր արդյունք, ինչպես նաև ձերբակալված անձի վերաբերելի ցանկացած հայտարարություն և բժշկական եզրակացությունն արձանագրվեն բժշկի կողմից և տրամադրվեն ձերբակալվածին, իսկ խնդրանքի դեպքում՝ նաև նրա փաստաբանին.
- բժշկի հայտնաբերած վնասվածքները, որոնք, հնարավոր է, լինեն վատ վերաբերմունքի արդյունք, դրանց վերաբերյալ արձանագրությունները պարբերաբար ներկայացվեն համապատասխան դատախազին:

Այնուհետև, ցանկացած ժամանակ, երբ ձերբակալվածը (կալանավորվածը)[28] ներկայացնում է վնասվածքներ և վատ վերա-

բերմունքի վերաբերյալ բողոք, նա պետք է պատշաճ բժշկական զննման ենթարկվի դատական բժշկության ոլորտի որակավորում կամ կրթություն ունեցող անկախ բժշկի կողմից: Միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի խստորեն պահպանվի բժշկական փաստաթղթերի գաղտնիությունը[29]:

Նույն հաշվետվությունում ԽԿԿ-ն քննարկվող իրավունքը դիտարկում է բացարձակ իրավունք, որի իրականացումը, ըստ նրա, չպետք է կախվածության մեջ դրվի քննիչի, դատախազի կամ դատավորի նախնական թույլտվությունից:

Նախագիծը բովանդակում է իրավակարգավորումներ, որոնք կոչված են ապահովելու հիշյալ պահանջների իրագործումը: Մասնավորապես, ըստ Նախագծի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ մեղադրյալն իրավունք ունի ձերբակալման կամ կալանավորման դեպքում պահանջել անվճար բժշկական զննում և ստանալ անվճար եզրակացություն, ինչպես նաև իր ընտրությամբ հրավիրել բժիշկ և անարգել հաղորդակցվել նրա հետ՝ առանց տեսողական կամ լսողական վերահսկման:

Լիտվայի վերաբերյալ հաշվետվության մեջ ԽԿԿ-ն նշել է, որ ազատությունից զրկված բոլոր անձանց բժշկի, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի մատչելիության իրավունքը պետք է երաշխավորվի ազատությունից զրկելու առաջին իսկ պահից: Ընդ որում, ձերբակալված անձի զննումն իր նախընտրած բժշկի կողմից կարող է կատարվել է իր հաշվին (19-րդ կետ)[30]:

Դրանից բացի, ԽԿԿ-ն ընդգծել է, որ իր ընտրությամբ բժիշկ հրավիրելու իրավունք անձին վերապահելը կարևոր երաշխիք է ոչ միայն վատ վերաբերմունքի կանխման, այլ նաև անձի կողմից իր սեփական բժշկի կողմից բժշկական զննման շարունակականություն ապահովելու համար: Այդպիսի զննումը կարող է իրականացվել ոստիկանությանը պատկանող շենքում (տարածքում), եթե պահպանված են բժշկական գաղտնիք սահմանող կանոնները (ԽԿԿ-ի՝ Չեխիայի վերաբերյալ 2007 թվականի հաշվետվություն, 21-րդ կետ)[31]:

ԽԿԿ-ն նաև ընդգծել է, որ այն դեպքերում, երբ ոստիկանությունում անձին ազատությունից զրկելու ժամանակահատվածը ենթադրաբար երկար է լինելու, ապա բժշկական օգնությունը պետք է լինի ակտիվ, այդ թվում՝ ներառի պարբերական բժշկական զննումներ ազատությունից զրկման վաղ շրջանում, ինչպես նաև համապատասխան վերաբերմունք ազատությունից զրկված անձանց բժշկական կարիքների նկատմամբ (Կիպրոսի վերաբերյալ 2008 թվականի հաշվետվություն, 47-րդ կետ)[32]: Այսինքն՝ բժշկի մատչելիության իրավունքը չպետք է ոտնահարվի նաև ազատությունից զրկման հետագա փուլերում:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն ՄԱԿ-ի բոլոր անդամ պետություններից նույնպես պահանջել է, որ ազատությունից զրկված բոլոր անձինք գործնականում ապահովվեն այնպիսի հիմնարար երաշխիքով, ինչպիսին բժշկի մատչելիությունն է[33]:

Իր ընտրած անձին իր գտնվելու մասին տեղեկացնելու իրավունքը:

Ազատությունից զրկված անձի՝ իր գտնվելու մասին տեղեկացնելու իրավունքը պետք է նույնպես երաշխավորված լինի ազատությունից զրկելու սկզբնական պահից:

Այս իրավունքի իրացման տեսանկյունից, սակայն, կարող են սահմանվել որոշակի բացառություններ՝ քրեական վարույթի կամ գործի քննության իրավաչափ շահերի պաշտպանության նպատակով: Այդուամենայնիվ, այդպիսի բացառությունները պետք է հստակ սահմանված լինեն օրենքում: Անհրաժեշտ է ապահովել սահմանափակումների սպառիչ շրջանակ: Ընդ որում, այդ բացառություններն ու սահմանափակումներն իրենց հերթին պետք է ապահովված լինեն արդյունավետ երաշխիքներով (օրինակ՝ տեղեկացնելու իրավունքի իրացման ուշացման ցանկացած դեպք պետք է արձանագրվի և հաստատվի տվյալ վարույթի հետ կապ չունեցող վերադաս պաշտոնատար անձի կամ դատախազի կողմից)[34]:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սրա հետ կապված՝ Նախագծի 110-րդ հոդվածի 6-րդ մասը արդարացիորեն սահմանել է, որ իր ընտրած անձին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել առավելագույնը վեց ժամով, եթե առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի անհապաղ իրականացումը կարող է խոչընդոտել հանցագործության կանխմանը կամ խափանմանը կամ հանգեցնել ապացույցների ոչնչացման կամ վնասման: Դրանից բացի, Նախագծի 7-րդ մասի համաձայն՝ հիշյալ իրավունքի իրականացման հետաձգման մասին անհապաղ գրավոր հայտնվում է ձերբակալվածին, ինչպես նաև կազմվում է առանձին արձանագրություն՝ դրանում շարադրելով այդ իրավունքի իրականացումը հետաձգելու պատճառները:

Նման իրավակարգավորումներ են բովանդակում նաև այլ երկրների դատավարական օրենքներ: Օրինակ՝ Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն՝ եթե ձերբակալումն իրականացրած իրավասու պաշտանատար անձը հիմնավոր կասկած ունի, որ ձերբակալման մասին տեղեկացնելու դեպքում այդ անձը կարող է վնասել մինչդատական վարույթին, կարող է ինքն անձամբ տեղեկացնել այդ մասին՝ պահպանելով դրա անհետաձգելիության վերաբերյալ պահանջը:

---

[1] Համահեղինակությունը՝ միջազգային իրավաբանության վերլուծության հարցում:

[2] Տե՛ս, օրինակ, Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի (http://www.cpt.coe.int/en/states/arm.htm), ինչպես նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի (Concluding observations of the UN Committee against Torture. Consideration of reports submitted by States parties under article 19 of the Convention. Armenia. Forty-Eight Session, 7 May–1 June 2012, կետ 11) իրավական փաստաթղթերը:

[3] Տե՛ս 12th General Report on CPT's Activities. Covering the period 1 January to 31 December 2001. Strasbourg, 2002 (http://www.cpt.coe.int/en/annual/rep-12.htm):

[4] Տե՛ս նույն տեղը:

[5] Սույն վերլուծության առարկա հարցերը կքննարկվեն այս հիմքով ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման տեսանկյունից:

[6] Տե՛ս Report of UN Special Rapporteur on Torture and other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment to Commission of Human Rights of 23 December 2005 http://www.un.org/Docs/journal/asp/ws.asp?m=E/CN.4/2006/6.

[7] Տե՛ս Legal Safeguards to Prevent Torture. The Right of Access to Lawyers for Persons Deprived of Liberty. Association for the Prevention of Torture. 2010, էջ 5:

[8] Տե՛ս 9th General Report on the CPT's activities covering the period 1 January to 31 December 1998 // CPT/Inf (99) 12, կետ 23 (http://www.cpt.coe.int/en/annual/rep-09.htm):

[9] Ավելի մանրամասն տե՛ս Criminal Procedure: Investigation and Rights to Counsel. Ronald Jay Allen…[et al.]-2nd edition, 773-799 էջերը:

[10] Տե՛ս Concluding observations of the UN Committee against Torture. Consideration of reports submitted by States parties under article 19 of the Convention. Armenia. Forty-Eight Session, 7 May–1 June 2012, 11-րդ կետ:

[11] Տե՛ս 12th General Report on CPT's Activities. Covering the period 1 January to 31 December 2001. Strasbourg, 2002 (http://www.cpt.coe.int/en/annual/rep-12.htm): Այս դիրքորոշումը տեղ է գտել նաև Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ հաշվետվության մեջ (http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.htm):

[12] Տե՛ս EU Directive of European Parliament and of the Council of 22 May 2012 on the right to information in criminal proceedings (2012/13/EU):

[13] Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 19-րդ կետը մեղադրյալ է համարում այն անձին, ում նկատմամբ առկա է Վրաստանի քրեական օրենսգրքով նախատեսված հանցանք կատարելու ողջամիտ կասկած:

[14] Տե՛ս Miranda v. Arizona, 384 U.S. 436 (1966). Criminal Procedure: Investigation and Rights to Counsel. Ronald Jay Allen…[et al.]-2nd edition, էջ 780:

[15] Մանրամասն տե՛ս Criminal Procedure: Constitutional Constraints upon Investigation and Proof / James Tomkovicz, Welsh S. White-7th edition, 688-704 էջերը:

[16] ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Գ. Միքայելյանի* վերաբերյալ գործով որոշում (ԵԱԴ/0085/06/09), կայացվել է 2009 թվականի դեմտեկբերի 18-ին:

[17] Ազատությունից զրկելու կառուցակարգերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների մեկնաբանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ», ընդհանուր գիտական խմբագրությամբ Ա.Մկրտումյանի, Դ.Ավետիսյանի, Վ.Ենգիբարյանի, Ռ.Մելիքյանի, Երևան, 2011, 109-125 էջերը:

[18] Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Էյրին ընդդեմ Իռլանդիայի գործով 1979 թ. հոկտեմբերի 9-ի վճռի 24-րդ կետը, Արտիկոն ընդդեմ Իտալիայի գործով 1980 թ. մայիսի 13-ի վճռի 33-րդ կետը և այլն:

[19] Եվրոպական դատարանի ընդհանրական բնորոշմամբ՝ պոզիտիվ պարտականության էությունն այն է, երբ պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ և ողջամիտ միջոցներ՝ երաշխավորելու համար անձի իրավունքների իրացումը գործնականում (տե՛ս Jean Francois Akandji-Kombe. Positive Obligations under the European Convention on Human Rights. A Guide to the Implementation of the European Convention on Human Rights. Council of Europe, 2007):

[20] Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93) 115-րդ կետը:

[21] Տե՛ս, օրինակ, 21st General Report. European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT). 1 August 2010 – 31 July 2011. CPT/Inf (2011) 28, CPT Standards Document – extracts of "substantive" sections of CPT reports (http://www.cpt.coe.int/en/documents/eng-standards.pdf):

[22] Տե՛ս, օրինակ, Concluding observations of the UN Committee against Torture. China, 2002, CAT A/57/44 (2002).

[23] Տե՛ս http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.htm:

[24] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, 109-125 էջերը:

[25] Տե՛ս օրինակ, 21st General Report. European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT). 1 August 2010 – 31 July 2011. CPT/Inf (2011) 28: ԽԿԿ-ն համանման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Ավստրիայի վերաբերյալ 2009 թվականի հաշվետվության 24-րդ կետում (http://www.cpt.coe.int/documents/aut/2010-05-inf-eng.htm):

[26] Տե՛ս Carnley v. Cochran, 369 U.S. 506, 516, 82S. Ct. 884, 890, 8L Ed. 2d 70 (1962): Այս մասին մանրամանս տե՛ս նաև Criminal Procedure: Constitutional Constraints upon Investigation and Proof / -James Tomkovicz, Welsh S. White-7th edition, 697-699 էջերը:

[27] Օրինակ՝ անվտանգության նկատառումներից ելնելով (տե՛ս CPT source book, 2012):

[28] Թեև ԽԿԿ հաշվետվության անգլերեն տեքստում օգտագործվում է միայն «detained» բառը, այդուհանդերձ ԽԿԿ-ի այս չափանիշները վերաբերում են ազատությունից զրկված բոլոր անձանց:

[29] Տես http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.htm:

[30] Տե՛ս http://www.cpt.coe.int/documents/ltu/2011-17-inf-eng.htm:

[31] Տե՛ս http://www.cpt.coe.int/documents/cze/2007-32-inf-eng.htm:

[32] Տե՛ս http://www.cpt.coe.int/documents/cyp/2012-34-inf-eng.htm:

[33] Տե՛ս Concluding observations of the UN Committee against Torture. Fortieth Session, Sweden, 28 April – 16 May.

[34] Տե՛ս 12th General Report on CPT's Activities. Covering the period 1 January to 31 December 2001. Strasbourg, 2002 (http://www.cpt.coe.int/en/annual/rep-12.htm): Այս մասին նշվել է նաև Հայաստանի վերաբերյալ ԽԿԿ-ն 2010 թվականի հաշվետվությունում (http://www.cpt.coe.int/documents/ arm/2011-24-inf-eng.htm):

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

GUARANTEES OF ENSURING RIGHTS OF AN ARRESTED PERSON AT THE INITIAL STAGE OF LIBERTY EPRIVATION, ACCORDING TO THE RA NEW DRAFT CRIMINAL PROCEDURE CODE

Arman TATOYAN
Adviser to the Constitutional Court of Armenia, Member of the Working Group for the Development of the new draft Criminal Procedure Code
Associate Professor at YSU, PhD in Law

David RUDOVSKY[1]
Professor at University of Pennsylvania, School of Law
President of the Board of Directors, Defender Association of Philadelphia

Since the RA Constitutional Amendments of 2005, the establishment of criminal procedure system became urgently making it in conformity with international jurisprudence and international commitments of the Republic of Armenia.

However, the legal reforms carried out all along this period showed that they were rather episodic with internal collisions, without due consideration of specificities of the Armenian legal environment.

Thus, development of a totally new Code of Criminal Procedure has great importance to regulate contemporary criminal-procedural relations comprehensively. In this context, it is particularly important to effectively ensure those people's rights who are deprived of their liberty within criminal procedure. This especially refers to initial stages of deprivation of liberty.

The article discusses provisions of the RA new draft Criminal Procedure Code in the light of its compliance with international legal standards, e.g. developed by the European Court of Human Rights, European Committee for the Prevention of Torture, UN Committee against Torture, etc. The jurisprudence of the Cassation Court of Armenia is also discussed in the article.

Main focus in the analysis is made on the specific rights set for arrested people in the new draft as follows: (i) access to a lawyer; (ii) access to a doctor; (iii) right to keep silence, etc. Furthermore, the article discusses each right in detail, revealing practical mechanisms of their implementation.

Overall, the article argues that these rights are effectively guaranteed against ill-treatment by law-enforcement officials.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գագիկ Ղազինյան, Սամվել Դիլբանդյան
ՀԱՆՐԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 4

Հրայր Ղուկասյան
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 19

Ռուբեն Մելիքյան, Տաթևիկ Սուջյան
ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 32

Արման Թաթոյան, Դևիդ Ռուդկովսկի
ՉԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿՄԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 46

Դավիթ Մելքոնյան
ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 59

Դավիթ Ավետիսյան
ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 67

Վահե Ենգիբարյան, Արթուր Չախոյան
ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 85

Սերգեյ Մարաբյան
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՑՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 107

Արմեն Հովհաննիսյան
ՆՈՐ ԿԱՄ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 126

Հայկ Սարգսյան
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 138

Գոհար Հակոբյան
ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎ ԵՎ ԴՐԱ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 148

Գոհար Սիմոնյան
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՒՅԹԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 159